

**ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՌԱԶՄԱԿԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԳՈՐԻՍԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ**

**ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ
ԼՈՒՍԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թեմափիկ խումբ, ռազմական բնագավառ, բարբառային բառեր, գրաբար, փոխառություն

Հայերենի բառապաշարի միջուկը կազմում է հնդեվրոպական բառաշերտը, որը որոշակի տեղեկություններ է հաղորդում հայ ժողովրդի ամենավաղ շրջանի կյանքի և գոյության տարբեր բնագավառների մասին: Հնագույն ժամանակների վերաբերյալ տեղեկությունները հիմնականում տրվում են նյութական ու մնայուն արժեքների միջոցով, սակայն դրանց բացակայության պայմաններում ժողովուրդների և ազգերի վաղ անցյալը ներկայացնելուն օգնում են լեզվական տվյալները: Բառերի թեմատիկ խմբերը կարող են որոշել նաև ժողովրդի՝ անցյալում ունեցած հետաքրքրությունները, զբաղմունքը, կենցաղը, սոցիալական վիճակը և այլն: Տվյալ թեմատիկ խմբում որքան շատ են բառերը, այնքան մեծ է այդ բնագավառի նկատմամբ ժողովրդի ունեցած հետաքրքրությունը: Բնական է, որ լեզվի զարգացման տարբեր շրջաններում կարող են փոխվել բառապաշարի ոչ միայն իմաստաբանական խմբերը, այլև դրանցում եղած բառերի քանակը: Միևնույն ժամանակ կարող են տարբեր լինել նույն լեզվի տարբերակներում ընդգրկված բառապաշարի թեմատիկ խմբերը: Դա պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝ աշխարհագրական դիրք, սոցիալ-տնտեսական, պատմաքաղաքական պայմաններ և այլն: Հայերենի բառերի իմաստային խմբերը բաժանելիս նկատվել է, որ լեզվի տարբեր շրջաններում բառերի քանակը թեմատիկ խմբերում տարբեր է եղել: Այսպես՝ Գ. Ջահուկյանը նշում է, որ վաղնջահայերենում բառերը քանակապես գերակշռել են ֆիզիկական աշխարհի խմբում, ապա մարդկություն, սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն խմբում: Դա բնական է, որովհետև այստեղ գործ ունենք առավել հաճախականություն ունեցող բառերի հետ: Դրանից բացի պետք է հիշել, որ խոսքը վաղնջահայերենի մասին է, այսինքն՝ բառապաշարի այն շերտի, որ հայերենին տվել է հնդեվրոպական մայր լեզուն և որը բառերի քանակով

չէր կարող համեմատվել ասենք լեզվի զարգացման մյուս շրջանների հետ: Բայց և այնպես հնագույն շրջանի բառապաշարի միջոցով կարելի է կարծիք կազմել, թե հայ ժողովուրդը հնդեվրոպերենից բաժանվելու շրջանում ինչ հետաքրքրություններ է ունեցել: Որքան էլ զարմանալի, բայց բառերի սակավությունը նկատվում է հատկապես ռազմական բնագավառում: Փաստորեն մեր ժողովուրդը այդ գործում առանձնապես ակտիվ չի եղել. «Ռազմական գործի հետ կապված բնիկ հնդեվրոպական բառերը հին հայերենում մեծ թիվ չեն կազմում»:¹ Մեր բառապաշարի իմաստաբանական խմբերից առավել առատ են գյուղատնտեսությանը և արվեստներին, կրոնին վերաբերող բառերը:

Լեզվական տվյալները համընկնում են պատմական փաստերի հետ այն առումով, որ մեր հարևան շատ ժողովուրդներ ռազմական բնագավառում հայերենին մի քանի անգամ գերազանցող բառեր են ունեցել:

Պատկերը, բնականաբար, այլ կլինի բարբառներում: Բարբառը որոշակի սահմանափակում ունի բառապաշարում և կազմում է լեզվի ընդհանուր համակարգի միայն մի մասը: Հենց այս առումով ենթադրելի է, որ բարբառներում քիչ են ոչ միայն թեմատիկ խմբերը, այլև դրանցում ընդգրկված բառերը: Միանգամից հնարավոր չէ որոշել, թե որ բարբառում են շատ ռազմական գործին վերաբերող բառերը, մանավանդ որ ռազմական տերմինները հիմնականում հարափոփոխ են, և նրանց գոյությունն ու գործածությունը կախված են այս բնագավառի անընդհատ զարգացումից:

Բարբառների թեմատիկ խմբերի ուսումնասիրությունը, դրանց զուգադրումը բարբառային այլ խմբերի հետ որոշակի տեղեկություններ կհաղորդի հայ ժողովրդի պատմականորեն ձևավորված լեզվի տարբերակների և այդ բարբառով խոսող հանրության մասին, այլև հայերենի բառապաշարի ծագումնաբանական խնդիրների վերաբերյալ:

Գորիսի բարբառում ռազմական բնագավառին նախալեզվից անցած բառերը հիմնականում ընդհանուր հայերենյան են և տարածված են հայերենի տարբերակների մեծ մասում, ինչպես՝ **մարտ, կռիվ, նետ, սուր, թուր, գերի**: Իհարկե, հայերենն այդ բացը լրացրել է այլ լեզուներից փոխառած բառերով, որովհետև, ինչպես նկատել են, անգամ ««գինվոր»

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն /նախագրային շրջան/, Ե., 1987թ., էջ 273:

հասկացությունն արտահայտող բնիկ հնդեվրոպական ծագման վաղնջահայ տերմին հին հայերենը չի պահպանել»:² Գորիսի բարբառը՝ որպես առանձին լեզվախմբի բարբառային տարբերակ, կրել է ոչ միայն հնդեվրոպականից ավանդված, այլև հետագայում այլ լեզուներից փոխառված շատ բառեր:^{*} Թեմատիկ խմբի այս բնագավառը բարբառը հարստացրել է նաև գրաբարից և բանավոր ճանապարհով անցած փոխառություններով: Սակայն, այս ամենով հանդերձ, պետք նշել, որ բարբառի բառապաշարի ռազմական թեմատիկ շերտը, ցավոք, շատ աղքատ է: Սա խոսում է այն մասին, որ այս տարածքի ժողովուրդը առանձնապես ընդգրկված չի եղել ռազմական գործողություններում: Ընդ որում՝ քիչ են ոչ միայն հարձակողական բնույթի բառերը, այլև պաշտպանական: Այդ են վկայում զինատեսակների ոչ մեծ քանակի առկայությունը հնագիտական իրերում, այլև բերդերի, ամրոցների սակավությունը պատմական հուշարձաններում համեմատած, օրինակ, կրոնական բնույթի կառույցների: Ուսումնասիրվող բառերը մենք նպատակահարմար գտանք բաժանելու ներթեմատիկ իմաստային խմբերի: Այսպես՝

1. Բառեր, որոնք ընդգրկվում են ռազմի թեմատիկ խմբի մեջ, ինչպես՝ աղեղն, յիրա՝ անել, չըխկըցնել, բարութ, բէհբուդ, դավի||դա՝ վի, դո՛ւշման, թըրփանգ, թօփ, հօզա, դուրդուշում, դօնդադ, դօշուն:

2. Բառեր, որ թեն ընդգրկել ենք ռազմական թեմատիկ խմբում, բայց դրանք վերաբերում են առարկան վեճ-կռիվներին, ինչպես՝ զա՝ նել, կօխ, բօմփել, զըրխկըցնել, թակել, թեթա՝ տա||թա՝ թա՝ տալ, թըկըմհակ անել, կամէչ անել, կուպըլաթակ անել, կ'ծղլու կէնա||կ'ծղ կէնալ, կօխ-կօխ անել, կօպալ, հակալ-հակալ անել, հային հըսնել, յիրա՝ անել, նի կապել, նըշան անել, շէպել, տափավը կ'ալ, տըլըզմել, տըմբըզել, տըփտըփել, ցակատ, քարկոծ անել=քըրըպարան անել, բուսուն պահել, դամա:

3. Իրեր, որ կարող են գործածվել նաև մարտում, ինչպես՝ բարսուդ||բարշուտ, կօպալ, թօլամագ, ցակատ, բայդադ, դըզ'անակ, թօփուզ, դամա:

² Նույն տեղում:

* Օրինակ՝ բանակ, գորք, պատերազմ, ռազմ, զինվոր, ռազմիկ, սպարապետ, պարս, տապար, նիզակ, զրահ, դարան և այլ պարսկական բառեր հիմնականում գործածական են բարբառում:

4. Բառեր, որ մատնանշում են մարտական գործողություն, կռվի ընթացք և այլն՝ինչպես՝ **բոմբիկ, զորքիկըցնել, թակել, թեթա՛ տալ||թաթա՛ տալ, թըկըմհակ անել, կալմէչ անել, կուպըլաթակ անել, կ՛ծողլու կէնալ||կ՛ծղ կէնալ, կօխ-կօխ անել, հակալ-հակալ անել, հային հըսնել, յիրա՛ անել, շէպէլ, չըխկըցնել, տափավը կա՛ լ, տըլըզմէլ, տըմբըզել, տըփտըփել, ցակատ, քարկոծ անել=քըրըպարան անել:**

Ինչպես նկատելի է, կան բառեր, որ ընդգրկվում են ներթեմատիկ և՛ մեկ, և՛ մյուս խմբերի մեջ: Դրանք առավել ընդհանրականություն և հաճախականություն ունեցող բառեր են և դժվար է վերագրել կոնկրետ խմբի:

Նպատակահարմար գտանք այդ բառերը բաժանել նաև ըստ ծագման: Ընդհանուր առմամբ առավել շատ են բարբառային բառերը՝ 25, փոխառությունները՝ 23, գրաբարյան՝5:³ Այս բաժանում պայմանական է: Նախ՝ կան փոխառություններ, որոնք արդեն համադրված կամ հարադրված են հայերեն ձևերին, ինչպես՝ **գ՛ուլլէլ, դա՛ վի տալ**, ապա՝ բարբառային բառերից շատերի հիմքում էլ ընկած են գրաբարում առկա բառեր, ինչպես՝ **կ՛ծղ կէնալ, քարկոծ անել:** Եվ հետո՝ ընդհանուրհայերենյան բառերի հիմնական մասը գործածական է բարբառում՝ **կոռիվ, մարտ** և այլն, որոնք չնայած առանձնացել են բարբառային ձևերից, սակայն ընկալելի և տարածված են եղել:

Գորիսի բարբառի ռազմական բնագավառի բառերի հիմաստաբանական պատկերը այսպիսինն է՝

Գրաբարից ավանդված՝ աղեղն-անեղ||հանէղ||անըղ, զարկանել-զա՛նէլ, կոխ-կօխ, կոան-կըռան, սատուր-սատուր:

Բարբառային բառեր՝ բարսուղ||բարշուտ- կաշվից պատրաստված երկու թոկերով քար նետող իր, որ ծառայել է նաև որպես խաղալիք, **բոմբիկ-ձեռքով խփել, գլխին հարվածել, զըրխկըցնել-ուժեղ թափով գետնին տապալել, ծեծել, թակէլ-ծեծել, թեթա՛ տալ||թաթա՛ տալ-սպառնալ, թըկըմհակ անել-ծեծել, թօլամագ-մահակ, գավազան, կալմէչ անել-շրջափակել, կուպըլաթակ անել-կոպալով ծեծել, կ՛ծողլու կէնալ||կ՛ծղ կէնալ-դարան մտնել, թաքնվել, կօխ կէնալ կէնալ /կօխ կըրցանել, կօխ-կօխ անել-կոխի բռնվել, մարտի բռնվել, կօպալ-հաստ գլխով գավազան,**

³ Քանակական այս բաժանման համար հիմք է եղել Ա. Մարգարյանի «Գորիսի բարբառը», Ե., 1975թ:

հակալ-հակալ անէլ- հալածել մեկին, ետևից ընկնել, **հային հըսնէլ-**մեկին օգնության հասնել, **յիրա՝ անէլ** /-տալ, -կյա՝լ և այլն/-1.նետել, 2. կրակել, 3. արձակել, **նի կապել-**հարվածել, գարկել, **նըշան անէլ-**նշան բռնել, **շէպէլ-** ուժեղ հարվածել, **չըխկըցնէլ-**կրակել, հրացանով կրակել, **տափավը կալ** /-տալ/- գետնովը տալ, **տըրըզմէլ-**ծեծել, **տըմբըզէլ-**բռնցքահարել, **տըփտըփէլ-**ծեծել, **ցակատ-**ծառի ճյուղերը կտրելու գործիք, **քարկոծ անէլ=քըրըպարան անէլ-** քարերով ծեծել:

Փոխառյալ բառեր՝բայդաղ /արաբ., թուրք./-դրոշ, **բաս** /պահէլ/ /պրսկ./-ապահով տեղ ապաստանել, **բարութ** /պրսկ., թուրք./-վառող, **բէհբուդ** /պրսկ., թուրք./-դաշույն, խանչալ, **բուսուն պահէլ** /թուրք./-մեկին հետապնդել, **գ՛ուլլա՛** /գ՛ ուլլէլ//պրսկ.,թուրք./-հրազենի գնդակ, **դավիլ|դա՛ վի** /արաբ., թուրք./-տալ/-վեճ, կոճիվ, **դըգճանակ** /պրսկ./-գավազան, **դուշմն** /պրսկ., թուրք./-թշնամի, **զաիրբ**/արաբ., թուրք./-ուժ, **զօռ** /-անէլ և այլն//պրսկ., թուրք./-ուժ, **ըռա՛ շիդ** /արաբ./-կտրիճ, **թըրփանգ** /պրսկ.թուրք/-հրացան, **թօփ** /պրսկ., թուրք./-գնդակ, **թօփուզ** /թուրք./-մահակ, **հուշում** /-կ՛ալ/ /արաբ./-հարձակում, **հօզա** /թուրք./-հրացան, **դալ** /-անէլ/ /թուրք./-շրջափակել, **դամա՛** /արաբ., թուրք./-դաշույն, **դուրդուշում** /թուրք./-արճիճ, հրացանի գնդակ, **դօնդաղ** /թուրք./-հրացանի կոթ, **դօշուն** /թուրք./-զորք, **փահիլվան** /պրսկ./-1.ըմբիշ, 2.քաջ, հսկա:*

Նշված խմբերում կան բառեր, որոնց վերլուծական քննությունը որոշակի տեղեկություններ կհաղորդի բառերի իմաստաբանական և հնչյունաբանական փոփոխությունների, ծագման ու կիրառության և այլն հարցերի շրջանակներում: Այս առումով ուշագրավ համարեցինք փոխառությունների քննությունը, որովհետև եթե գրաբարյան ու բարբառային բառերը ինքնին ըմբռնելի են, ապա սրանց համեմատությամբ փոխառությունները ունեն պարզաբանման խնդիր:*

* Թե՛ բարբառային, թե՛ փոխառյալ շատ բառեր, որ վերաբերում են ռազմական գործին, այսօր գործածության հաճախականություն չունեն և բարբառում էլ ընդգրկվում են պատմաբառերի և հնաբանությունների շարքում:

* Չնայած կան բարբառային բառեր, որոնք նույնպես կարոտ են ստուգաբանական քննության, ինչպես՝ **բարսուդ, թակէլ, թեթա՛, թօլամագ, կօպալ, հակալ-հակալ անէլ, ցակատ** և այլն: Սրանցից որոշները հնարավոր է ունենան օտար ծագում: Մեր ուսումնասիրության շրջանակում չէ բարբառային տերմինների ստուգաբանությունը, և որևէ հիմք չունենալով՝ այդպիսիք պայմանականորեն ընդգրկում ենք բարբառայինի շարքում՝ պարտք համարելով սրանց հետագա և հանազամանալից քննությունը:

Այսպես՝

Բայրաղ-դրոշ: Թուրք.՝ bayrak(ği), պրսկ.՝ پرچم /parchak/, ադրբ. նման է թուրքերենին: Միջին հայերենին անհայտ է: Չի նշվում նաև ՆՀԲ-ում: Համեմատաբար նոր է և բարբառում էլ դիտվել է որպես օտար բառ, իսկ ժամանակակիցները չեն գործածում: Օսմաներենում արդեն գործածական էր որպես «մարզ, վարչական տարածք նշող կտոր» իմաստներով: Հավանաբար անցել է պարսկերենից: Հին և նոր թուրքերենում գործածական է նաև bayrakdar-ը՝ «դրոշակակիր»:

Բաս /պահել/-ապահով տեղ ապաստանել: Պարսկերենից հայերենին անցած ունենք bast «ապաստարան»⁴ և հավանաբար այդ բառից՝ բաստարան «բանտ»: Պրսկ. تبس «ամրացում» բառից է հավանաբար **բաս պահել**-ը՝ վերջադիր շնչեղ խուլի անկմամբ: Չնայած արտաքին նմանությանը, այնուամենայնիվ, կարծում ենք կապ չունի թուրք. **pusu** «դարան, որոգայթ, դարանակալում»⁵ բառի հետ, որ բարբառում գործածվում է **բուսուն պահել** «հետամուտ լինել»: Նմանություն ունի նաև **բաս մտնել** բառին, սակայն կարծում ենք՝ արմատը գրբ. **բայ**-ն է, որ հարադրության մեջ դրված է եզակի երկրորդ դեմքի խոնարհմամբ՝ **բաս /դու բաս/** «հակառակվել, վիճել» իմաստներով: Հենց սրա համաբանությամբ էլ **բաս պահել**-ի **տ**-ն դուրս է մնացել:

Բարութ /արաբ., պրսկ., թուրք./-վառող: Պրսկ.՝ باروت /barut/, արաբ.՝ بارود /barut/, թուրք.՝ barut: Դժվար է որոշելը, թե որ լեզվից է անցել հայերենին, բայց ծագումը արաբական է:

Բեհբուդ /պրսկ., թուրք./-դաշույն, խանչալ: Թե ինչ առնչություն ունի օսմ. և թուրք. **behdud**՝ անցած պարսկերենից՝ نقاهت /թուրք.՝ sağlık, sağlamlik, iyilik-առողջություն, ուժ ու բարություն բառերի հետ, դժվարացանք որոշել: Տարածված է բարբառներում՝ Ար., Թբ., Կր., Արց., ՆՆ., նաև **բեբուդ** ձևով՝ «սառը զանք»:

Բուսուն պահել /թուրք./-մեկին հետապնդել: Տե՛ս **բաս** բառահոդվածը:

Գունլա՝ /գունլել//պրսկ.,թուրք./-հրազենի գնդակ: Թուրք.՝ gülle, ադրբ.՝ kyllə: Տեղի է ունեցել վերջադիր e>ա փոփոխությունը: Հայերենին անցել է թուրքերենից:

Դավիլ|դա՛ վի /արաբ., թուրք./-տալ/-վեճ, կռիվ: Թուրք.՝ **dâva** «վեճ,

⁴ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 244:

⁵ Турецко-русский словарь, М., 1945г., ст. 495.

դատավարություն»: Հին թուրք.՝ **da'vâ** շատ նշանակություններ է ունեցել՝ «հայց, պնդում, մեղադրանք և այլն»: Հայերենի բարբառներում առանձին գործածական չէ, միշտ հանդես է գալիս հարադրությամբ: Ծագում է արաբ.՝ **da'wa** «հայց, պահանջ» իմաստից՝ عوى: Իմաստային համապատասխանության հիմունքով կարծում ենք, որ անցել է թուրքերենից:

Դրգ'անակ /պրսկ./-գավազան: Հավանաբար ***gadā** արմատից՝ «փայտ, մահակ, գավազան» իմաստներից դրափոխությամբ՝ գադանակ-դագանակ:⁶ Պրսկ.՝ **gadā**. միջին պարսկ.՝ **gad**:

Դուշման /պրսկ., թուրք./-թշնամի: Միջ. պրսկ. **dušman [dwšmn']** թշնամի: **Duš** «վատ», «չար», որ ծագած է ***duš-** «վատ», ***dus+man** «վատ տրամադրությամբ, հակվածությամբ»: ⁷ Թուրք.՝ **düşnam**: Հայերենի բարբառներին անցել է պարսկերենից. հմմտ.՝ թշնամի:

Ջարբ/արաբ., թուրք./-ուժ: Արաբ. **szarb**՝ «հարված» [szaraba] ադրբ.՝ zerbe, հնդկ.՝ zarab, պրսկ.՝ szarb, Թուրք.՝ zarp, ուզբ.՝ zarba: Հայերենում այն մոտ է արաբերեն և թուրքերեն ձևին, գործածական է միայն բարբառներում: Արաբ. ձևից տարբերվում է սկզբնային **ս**-ի անկումով հավանաբար շփականների տարնմանության օրենքով, իսկ թուրքերեն ձևից՝ **փ-բ**: Թուրք. **harp** և հայերենի **հարբա զալ** հավանաբար ծագում են հենց սրանից՝ szaraba «հարված» [սեմ. հիմքը՝ **sz-r-b**]: Բարբառներում Արց.՝ հարբա՝ կյալ/նի մըննէլ, Գոր.՝ հարբա՝ անել և այլն:

Ջոն /-անել և այլն//պրսկ., թուրք./-ուժ: Պրսկ.՝ زور /zor/: Կարծում ենք՝ ընդհանրություններ ունի հայ. **hqor** բառի հետ, որ, ըստ ՀԱԲ-ի, առաջացած է պահլ. hu-**zōr**-ից: Հայերենի՝ թուրքական փոխառություններում նշվում են **qon** «1. Դժվար, 2. Բռնի, ուժ»⁸ իմաստները: Սա հայերենի բարբառներին անցած ամենավաղ փոխառություններից է, որ մեր լեզվի միջնորդությամբ անցել է թյուրքական լեզուներին:

Րաշիդ /արաբ./-կտրիճ, խիզախ, քաջ, արի, հրաշալի, գեղեցիկ հազնված, հիանալի, رشيد /rashid/ [rashada] հնդ. rasyid, պարսկ. rashid:

⁶ В. Расгоргуева, Д. Эдельман, Этимологический словарь иранских языков, т. 1, М., 2000г., ст. 102.

⁷ Նույն տեղում, էջ 451:

⁸ Հր. Աճառեան, Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 93:

Պարսկերենից հայերենին անցած մի քանի փոխառությունների նման ստացել է նախադիր ձայնավոր, որը հավաստում է, որ մեր բարբառներին պիտի անցած լինի պարսկ. միջնորդությամբ կամ ուղղակի համաբանությամբ ստացել է նախադիր ը:

Թըրփանգ /պրսկ.թուրք./-հրացան: Ադրբ.՝ τυфәнк, պրսկ.՝ تفنگ /tufang/, թուրք.՝ tıfek /ği/: Հայերենի բարբառներում՝ թրփանգ, թվանգ: Առավել տարածված է վերջինը՝ թվանգ Թբ., արց., Շմխ. բարբառներում: Պարզ երևում է, որ հայերենին անցել է պարսկերենից և ենթարկվել հնչյունական փոփոխությունների՝ ու>ը փոփոխությամբ և ր աճականով, որ ստացվել է համաբանությամբ, հմմտ.՝ թոշնել-թորշնել և այլն:

Թօփ /պրսկ., թուրք./-գնդակ: Պրսկ.՝ توپ /top/: Թյուրք. լեզուներում նույնն է՝ top: Բարբառներին անցել է «1. գնդակ, 2. թնդանոթի արկ» իմաստներով:

Թօփուզ /թուրք./-մահակ: Թուրք.՝ topuz: Հավանաբար պրսկ.՝ دیوس /debus/ ձևից՝ «հին ժամանակներում պատերազմում օգտագործվող լախտ կամ մահակ»: Հայերենի բարբառներին անցել է թուրքերենից՝ օսմ.՝ توپوز /topuz/: Պրսկ. ունի توپوز /topuz||tupuz/ «1. մուրճ, 2. ջարդել» իմաստները:

Հուջում /-կայ/ /արաբ./-հարձակում: Արաբ.՝ هجوم /hujum/ [hajama], ադրբ.՝ hucum, հնդկ.՝ hujum, պրսկ.՝ hojum, թուրք.՝ hucum, ուզբ.՝ khudzhum այս բոլորին անցած է արաբերենից հավանաբար պրսկ. միջնորդությամբ:

Հօզա /թուրք./-գավազան, շատ մեծ մահակ: Ադրբ. ունի նաև «դանակ» իմաստը, որ գործածական է բարբառներում:⁹

Ղալ /-անել/ /թուրք./-շրջափակել: Հավանաբար ղալա թուրք. kale, ադրբ.՝ kala /ğala/, «բերդ, ամրոց» բառից: Հավանաբար արաբ kala «պաշտպանություն, հսկողություն» բառից: Բայց մեր բարբառում ունենք նաև կալմեջ անել հարադրությունը՝ «շրջափակել» իմաստով: Այլ Մարգարյանը նշում է փոխառյալների ցանկում: Գուցե սա հայերենի «կալ, կալով»՝ «բռնելու գործողություն, բռնել, տիրել» իմաստներից առաջացած բառն է: Այդ են հուշում հենց կալմեջ անել, ինք կալ>կա բառերը: Նախադիր ղ-ն պիտի առաջացած լինի թյուրք. ğala-ի համաբանությամբ, որը գործածական է մեր լեզվում՝ Ղալա բերդ և կալ անել «կալցել»-ի տարաբանությամբ:

⁹ St' u Azrbeycan dialektoloji lugəti, Ankara, c. 1, 1999y., 229.

Փոխառությունների քանակը կարելի է համալրել այս բառերով՝ **ղամա՛** /արաբ., թուրք./-դաշույն, **ղուրղուշում** /թուրք./-արճիճ, հրացանի գնդակ, **ղօնղաղ** /թուրք./-հրացանի կոթ, **ղօշուն** /թուրք./-զորք, **փահլիվան** /պրսկ./-1.ըմբիշ, 2.քաջ, հսկա, որոնք հնչյունական և իմաստաբանական առանձնակի փոփոխություններ չեն կրել, և չենք արժանացրել վերլուծական քննության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աճառեան Հր., Թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեանի բարբառներուն, Մոսկուա-Վաղարշապատ, 1902:
2. Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Ե., 1940:
3. Մարգարյան Ալ. «Գորիսի բարբառը», Ե., 1975:
4. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն /Նախագրային շրջան/, Ե., 1987:
5. Расгоргуева В., Эдельман, Этимологический словарь иранских языков Д., т. 1, М., 2000.
6. Турецко-русский словарь, М., 1945.
7. Azrbeycan dialektoloji lugəti, Ankara,c. 1, 1999.

ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ադրբ.-ադրբեջաներեն
 Արաբ.-արաբերեն
 Գրբ.-գրաբար
 Թյուրք.-թյուրքական
 Թուրք.-թուրքական
 ՀԱԲ-Հայերենի արմատական բառարան
 Հմմտ.-համեմատել
 Հնդկ.-հնդկերեն
 ՆՀԲ-Նոր բառարան հայկազյան լեզվի
 Սեմ.-սեմական

ՄԳԵՐ ԿՄՈՒՆՇ, ԼՍԻՆԵ ՆԵՐՏԻՏՅԱՆ - ՎՈԵՆՆԵ ԹԵՐՄԻՆՆԵՐ ԵՆ ԳՐԻՏԻ ԴԻԱԼԵԿՏԵ

Анализ определенных групп диалектов предоставит информацию об исторически сформированных вариантах армянского языка, а также об обществе, говорящем на этом языке.

Военные термины диалекта Гориса имеют следующее описание: количество слов из диалектов - 25 - բարսուդ||բարշուտ, բոմփէլ, զըրխկըցնէլ и т. д., заимствованные слова – 23 - բայդաղ, բաս, բարուֆ, բէհբուդ и т. д., слова, заимствованные из габара - 5 - աղեղն-անեղ и т. д.

Небольшое количество военных терминов в диалекте Гориса говорит о том, что народ, проживающий в данной области, мало интересовался военным делом.

MHER KUMUNTS, LUSINE NERSISYAN - MILITARY TERMS IN GORIS DIALECT

The analysis of the semantic groups of dialects will give some information about the historically formed variants of the Armenian language, as well as about the society which speaks that language.

Military terms in Goris dialect have the following description: there are 25 dialect words - բարսուդ||բարշուտ, բոմփէլ, զըրխկըցնէլ and so on, 23 borrowed words - բայդաղ, բաս, բարուֆ, բէհբուդ, etc... 5 words from grabar - աղեղն-անեղ, etc.

The lack of military terms in Goris dialect hints at the fact that the people in this area had a little interest in the military science.